

Զիլիգա

Մակերես՝ 5.57 կմ²

Բնակչություն՝ 103

Զիլիգայի (բառ. բացատրություն՝ սիզախտտով հարուստ վայր, ժող. բաց.՝ շատ հեռու) գյուղը հիմնադրվել է 1910թ., Հայկի որդի Խոռի կառուցած Խորակերտ կամ Խոռակերտ գյուղաքաղաքի տեղում, որից պահպանվել է միայն համանուն եկեղեցին (XIIդ): Պահպանվել է նաև Չախալաբերդ (պատմության մեջ՝ Բազաբերդ կամ Բազկերտ) ամրոցի մի մասը (IX-X):

Գյուղը գտնվում է ծովի մակերեւոյթից 1250 մ բարձրության վրա՝ չքնաղ Լալվարի ստորոտում, որի սառնորակ ջուրն է վայելում ջիլիգցին: Գյուղը շուտով 100 %-ով կապահովվի խմելու ջրով (ջրագծի կառուցումը ընթացքի մեջ է):

Զիլիգան գտնվում է Կրաստանի Հանրապետության սահմանի մոտ, մարզկենտրոնից 80, հայկական ամենամոտ բնակավայրից (Ալավերդի) 30 կմ հեռավորության վրա:

Գյուղի կլիման ձմռանը դաժան է, անանցանելի է դառնում գյուղի միակ լեռնային ճանապարհը, եւ գյուղն ամիսներով կտրվում է արտաքին աշխարհից:

Ամառը հաճախակի չորային է, որի պատճառով ջիլիգցին նորմալ բերք չի ստանում:

Հողերն անջրդի են, հաճախակի երաշտ է լինում: Հիմնականում զբաղվում են եգիպտացորենի, կարտոֆիլի մշակությամբ, որը կախված է բնության քմահաճույքից: Երաշտը դժվարացնում է նաև անասնապահության աշխատանքները:

Գյուղում գործում է մեկ բուժկետ առանց հարմարությունների: Չկա համապատասխան գույք եւ սարքավորում: Բուժկետն ունի շտապ օգնության մեքենա: Բուժկետն ունի մեկ աշխատող: